600.0081.28.11.03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2003 թվականի N81Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՄԱՐԺԱՅԻ ԵՎ «ՀԱՅԷՆԵՐԳՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 22-րդ հոդվածի 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի N79Ա որոշմամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի բաշխման N0092 լիցենզիայի պայմանների 4.20 կետը, հաշվի առնելով, որ 2004 թվականի համար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սակագնային մարժայի մեծությունն ընդունվում է 1 կՎտժ-ի համար 1.50 ԱՄՆ ցենտին համարժեք դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 9.210 դրամ/կՎտժ, առանց ավելացված արժեքի հարկի:
2. Ընդունել ի գիտություն, որ «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական

ընկերությանը վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնում ներառված են նաև էլեկտրաէներգետիկական շուկային ծառայություններ մատուցող ընկերությունների ծառայությունների դիմաց վճարները:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հուլիսի 31-ի N 53Ա որոշման 1-ին կետի 1.8 ենթակետը և 2-րդ կետը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
28 նոյեմբերի 2003թ.
ժամը 16^{30}